

Յայտարարութիւն ՀՅԴ Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական կոմիտէի

Արդէն վեցերորդ դաշնակցական գործիչն է Արեւմտեան Եւրոպայի (Ճրանսա, Հոլանտա, Պելճիքա) մեր շարքերէն, որուն մուտքը կ'արգիլուի Հայաստան:

Ասլան Ասլանեան, Ալմելոյի (Հոլանտա) մեր գործունեայ անդամներէն, հանդերձ ընտանեօք կը մեկնէր Հայրենիք՝ ՀՄԸՄ-ի ընդհանուր բանակումին մասնակցելու, երբ սահմանին վրայ, օդակայանին մէջ կ'արգիլուի անոր մուտքը:

Թուրքին հետ սիրաբանութեան մէջ եղող, Արցախը թշնամիին զիջած, պարտուած, արտաքին թէ ներքին ճակատներու վրայ հեղինակազրկուած իշխանութիւնները, ԱԱԾ-ի մեղսակցութեամբ եւ գործակցութեամբ, յայտնապէս վտանգ կը նկատեն դաշնակցական ակտիւիսթը քան թուրք քաղաքացին, որ այսօր հեղասահ մուտք կը գործէ Հայաստան:

Ամօթի որեւէ խայծ չունեցող ապագային այս իշխանութիւնները շատոնց հատած են անընդունելի սահմանը: Մէկ բան յստակ պէտք է իմանան, սակայն, բոլորը, որ նմանօրինակ ճղճիմ ու վատագի արարքներով անկարելի է կոտորել Հայրենասէր ու հայ մարդու, առաւել՝ երդուեալ դաշնակցականի յանուն Ազգի, Հայրենիքի ու Հայ Դատի մարտնչող պայքարի ոգին: Ընդհակառակն, այդ ոգին կ'ամրագրուի աւելիով, կը բազմապատուի աւելի քան երբեք:

Այս հալածանքի հոլովոյթին վերջ կը տրուի այն ատեն միայն, երբ ազգովին կը ձերբազատինք չարիքի այս իշխանութիւնէն, երբ կը հեռացուի թրքահաճոյ նեխած քլանը:

Վերջապէս, աւելորդ է հարկաւ յայտնել, որ ընկեր Ասլան Ասլանեան կը վայելէ մեր բոլոր շարքերուն անվերապահ զօրակցութիւնը: Մենք միասնաբար պարտութեան կը մատենք դիմեմ այս հոլովոյթին ետին կանգնող գլխաւոր թէ երկրորդական դերակատարները, որոնց ձեռագիրին ծանօթ ենք լաւապէս եւ կը վերականգնենք արդարութիւնը ամէն զնով:

ՀՅԴ Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական կոմիտէի Փարիզ, 20 Յուլիս 2023

Գանատահայ գործարարներ Տ. եւ Տ. Սարգիս եւ Թերեզիթա Քէօսէեան 100 հազար տուար կը նուիրեն ՀՅԴ Բիւրոյի եւ Հայ Դատի աշխատանքներուն

Գանատահայ գործարարներ Տ. եւ Տ. Սարգիս եւ Թերեզիթա Քէօսէեան 100 հազար տուար կը նուիրեն ՀՅԴ Բիւրոյի եւ Հայ Դատի աշխատանքներուն:



Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական 12-րդ բանակումի մասնակիցներուն յարգանքի տուրքը Ենարուրի եւ Ծիծեռնակաբերդի մէջ: Կարդալ էջ 6

Գանատայի շրջանի 26-րդ եւ ՀՕՄ-ի 102-րդ Պատգամաւորական ժողովը կայացաւ Մոնթրէալի մէջ



Կարդալ էջ 3


Մահ բազմավաստակ պատմաբան Ռիչըրտ Յովհաննէսեանի

Յուլիս 10-ին, Լոս Անճելըսի մէջ կեանքէն հեռացաւ ամերիկահայ պատմաբան Ռիչըրտ Յովհաննէսեանը:

Փրոֆեսոր Ռիչըրտ Յովհաննէսեան ծնած է 9 Նոյեմբեր, 1932ին, Թուլարէ (Գալիֆորնիա): Մեծ Եղեռնի վերապրողներ Գասպար Յովհաննէսեանի եւ Սիրուն Նալպանտեանի չորս որդիներէն երրորդն էր: Յեղասպանութեան վերապրողներու զաւակ ըլլալը կարեւոր դեր խաղացած է իր ուսումնական կեանքին մէջ: 1957ին, ամուսնացած է տղթ. Վարդիթեր Կոճոլոզեանի հետ (1931-2021) Յրէզոյի մէջ եւ բախտաւորուած են չորս զաւակներով՝ Ռաֆֆի, Արմէն, Անի եւ Կարօ: Ռաֆֆի Յովհաննէսեան հետագային պիտի դառնար Հայաստանի երրորդ հանրապետութեան առաջին Արտաքին Գործոց նախարարը (1991-1992):

Ռիչըրտ Յովհաննէսեան, որ Գալիֆորնիոյ համալսարանին մէջ (Լոս Անճելըս) սկսած էր դասաւանդել 1962ին, նոյն համալսարանէն պատմութեան իր դոկտորան ստացած է 1966ին: Յաջորդ տարին, իր աւարտաճառը հրատարակուած է «Հայաստան՝ անկախութեան ճանապարհին վրայ», ներածութիւնը հանդիսանալով անոր քառահատոր գլուխ գործոցին՝ «Հայաստանի Հանրապետութիւնը» խորագրուած (1971-1996): Ան կարեւոր մասնակցութիւն ունեցած է Գալիֆորնիոյ համալսարանին մէջ (Լոս Անճելըս) հայոց պատմութեան ամպիոնի հաստատումին մէջ: Հայ կրթական Հիմնարկութեան անունով արդի հայոց պատմութեան ամպիոնի առաջին վարիչը եղած է 1987ին: 2011ին հանգստեան կոչուելէ ետք, ամպիոնը իր անունով վերանկարուած է:

Հանգուցեալ պատմաբանը արեւմտեան կիսագունդին մէջ ամուր հիմքերու վրայ դրած է արդի հայոց պատմութեան կալուածի հետազոտութիւնն ու դասաւան-



Ռիչըրտ... Ծար. էջ 5

HONDA GABRIEL

THE ALL-NEW 2023 HONDA CR-V TOURING HYBRID

KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN

7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, (Québec) H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միֆան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



«Միմոն Զաւարեան»Էն Լէօ Սարգիսեան

Արթուր Շէկեանը ծնած է Հայաստան, իսկ պատանեկութեան եւ երիտասարդութեան տարիները անցուցած է Թորոնթօ, Գանատա: Յաճախած է ՀՕՄ-ի Ամէնօրեայ Վարժարանը եւ աւարտած՝ գերազանց արդիւնքներով: Այժմ կ'ուսանի University of Toronto-ի քաղաքագիտութեան եւ տնտեսութեան բաժանմունքին մէջ: Նաեւ ՀՅԴ Գանատայի երիտասարդական Միութեան Թորոնթոյի «Միմոն Զաւարեան» մասնաճիւղի գործուն անդամ է եւ անոր փոխ ատենապետը: Հայ գաղութի պայմաններու բարելաւման եւ Հայ Դատի գործունէութեան յառաջացման ծառայելը՝ Արթուրին միշտ հպարտութիւն եւ գոհունակութիւն պատճառած է: Եւ որպէս բնական ընթացք տարիներու կամաւոր աշխատանքին, աւարտած է Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի «Լէօ Սարգիսեան» Վարժողական Մրցախը:

Ստորեւ ՀՅԴ ԳեՄ-ի «Միմոն Զաւարեան» մասնաճիւղի անդամ Արթուր Շէկեանի տպաւորութիւնները Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի «Լէօ Սարգիսեան» վարժողական ծրագրին մասնակցութեան առթիւ:

Փոքր տարիքէս, փափաքած եմ մարզական, յատկապէս ոտնագնդակի, ոլորտէն ներս գործել: Բայց միեւնոյն ժամանակ փափաքած եմ Հայ Դատի հետ առնչուող յառաջ տանիլ: 27 Սեպտեմբեր 2020-ին, երբ սկիզբ առաւ 44-օրեայ Արցախեան պատերազմը, ԳեՄ-ի «Միմոն Զաւարեան» մասնաճիւղի անդամներով ամէն օր կը կազմակերպէինք զանազան ցոյցեր, կը պատրաստէինք հսկայ պաստառներ, որպէսզի մեր ընկերները առաւօտեան ժամը 4-ին զանոնք կարեն քաղաքի բարձր կամուրջներէն: Բոլորը իրենց առօրեայ գործերը եւ մտահոգութիւնները մէկդի դրած՝ կեղծոնացած էին մէկ նպատակի վրայ եւ հաւաքուած՝ մէկ գաղափարի շուրջ՝ լաւագոյնս ծառայել Հայրենիքին եւ աջակցել Հայ գիւնուորին ու ժողովուրդին:

Դժբախտաբար այդ սաստիկ մարտերուն ընթացքին, մանկութեան ընկերոջս քեռին, ընկեր Քրիստափոր Արթինը, մեր հողերը պաշտպանած ժամանակ գոհուեցաւ եւ միացաւ մեր անմահ հերոսներու սուրբ փաղանգին: Այդ օրուրէն սկսեալ, աշխարհահայեացքս ամբողջովին փոխուեցաւ: Այն բոլոր մտածումներս եւ ծրագրերս, որոնք Հայաստանի եւ Արցախի հզօրացման չէին ծառայել, սկսան թուիլ անկարելի: Եւ հակառակ անոր որ պատերազմը աւարտեցաւ մեր հրաժարութեամբ, ես պատրաստ չէի յանձնուելու: Այսպէս, երբ լաւագոյն ընկերովմէս լսեցի «Լէօ Սարգիսեան» ծրագրին մասին, որոշեցի չփախցնել այս հրաշալի առիթը:

Թէեւ ունէի որոշ մտավախութիւններ, որոշ ժամանակով ուրիշ երկիր մը ճամբորդելու, ամբողջովին նոր շրջանակի մը ծանօթանալու եւ անմիջապէս գործի լծուելու մասին, սակայն այն օրը, երբ ստացայ ընդունուած ըլլալուս լուրը, չափազանց ուրախ էի: Այսօր արդէն համոզուած եմ, որ այս ծրագրին մաս կազմելս կեանքիս լաւագոյն որոշումներէն մէկն էր



Այժմ տարբեր սպարէզներու մէջ գործող անհատներու եւ մասնագէտներու հետ ունիմ նորաստեղծ բարեկամութիւններ, որոնք ապագային կրնան յենարան դառնալ մասնագիտութեանս ընթացքին հանդիպելիք մարտահրաւէրներուն դէմ: Capitol Hill այցելութիւններուն շնորհիւ առիթը ունեցայ ականատես ըլլալու ընթացող լուրջ քաղաքագիտական խորհրդակցութիւններու եւ բարելաւելու իմ հաղորդակցական կարողութիւններս:

Այն փորձառութիւնը, զոր շահեցայ, այն ընկերական սերտ կապերը, զորս հաստատեցի ծրագրի միւս մասնակիցներուն հետ, եւ այն արժէքաւոր դասերը, զորս քաղեցի Ալեքս Գալիցկիի, Արամ Համբարեանի եւ ընկերուհի Եղսոյի հետ ունեցած զրոյցներէս, իսկապէս աննախընթաց էին ինծի համար: Անհամբար եմ տուն վերադառնալու եւ Գանատայի ընկերներու ու ընկերուհիներու պատմելու այս 6 շաբաթներուն ընթացքին պատահած հետաքրքրական եւ յիշարժան դէպքերուն մասին: Թերեւս անոնցմէ ոմանք կը հետաքրքրուին եւ կ'որոշեն մօտ ապագային մասնակցել այս հրաշալի ծրագրին: Ի վերջոյ Հայ Դատին միշտ պէտք են անձնուէր եւ չյանձնուող նոր գիւնուորներ:

Արթուր Շէկեան

Գանատայի շրջանի 26-րդ եւ ՀՕՄ-ի 102-րդ Պատգամաւորական ժողովը կայացաւ Մոնթրէալի մէջ

Գանատայի Շրջանի 26-րդ եւ ՀՕՄ-ի 102-րդ Պատգամաւորական ժողովը տեղի ունեցաւ Մոնթրէալի Հայ կեդրոնի Ա. Ահարոնեան սրահէն ներս: Ժամը 3:30-ին Գանատայի Հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Բարբէյ Արք. Չարեան, Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Եագուպեան եւ Արժ. Տ. Եսայի Քհն. Մանուկեան ծափողջոյններով դիմաւորուեցան ներկաներուն կողմէ: Ժողովի բացումը տեղի ունեցաւ Հայաստանի եւ ՀՕՄ-ի քայլերգներու ունկնդրութեամբ, որմէ ետք աղօթք կատարուեցաւ զոհուած ազատամարտիկներուն, ինչպէս նաեւ մեզմէ յաւատարմութեամբ ՀՕՄ-ի ընկերուհիներու հոգևոյ ի յիշատակ: Սրբազան Հայրը խօսք առնելով դրուատեց ՀՕՄ-ի անդամներուն բեղուն աշխատանքը եւ յաջողութիւն մաղթեց ՀՕՄ-ի 26-րդ Պատգամաւորական ժողովին:

Ներկայ էին ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ Արմինէ Կարապետեան, Գանատայի Հայոց թեմի Ազգային վարչութեան ներկայացուցիչ Աննա Պուլկարեան, ինչպէս նաեւ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Մարալ Նազարեան, «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագիր Վահագն Գարաբազեան, Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Շրջանային վարչութեան ատենապետուհի Թամար Շահինեան, ՄԸՄՄ Գանատայի Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Սօսի Արապեան, ՀՅԴ ԳեՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ ընկ. Քամի Ունանեան եւ ՀՅԴ Գանատայի Պատանեկան Միութեան ներկայացուցիչ Նորա Արուշեան:

Ներկայացուցիչները խօսք առնելով գնահատեցին ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի տարած ազօգուտ գործունէութիւնը, հայրենիքի, Գանատայի, թէ սփիւռքեան գաղութներու մէջ:

Շրջանային Վարչութեան ատենապետ ընկ. Լուսին Փալանճեանի կարգահրաւերէն ետք առժամեայ դիւանի ատենապետ ընտրուեցաւ ընկ. Անի Օհանեան (Լաւալ), իսկ ատենադպիր ընկ. Ջեփիլու Սաչատուրեան Թորոնթոյէն, որմէ ետք Իրաւասութիւններ ճշդող եռանդամ յանձնախումբը յայտարարեց, որ ՏՃ պատգամաւորներ կը մասնակցին ժողովին, իսկ Գանատայի տասը մասնաճիւղերէն եթէ միայն ներկայ էին: Օթթաւայի «Սեւան» մասնաճիւղը, Սէնթ Գաթրիէի «Արազ» եւ Համիլթընի «Արեւ» մասնաճիւղերը չէին կրցած միանալ սոյն ժողովին:

Յաջորդ օրակարգէն էր մասնաճիւղերու գեկոյցը երիտասարդ անդամներ ներգրաւելու նիւթին շուրջ եւ այդ առնչութեամբ վարչութիւններու տարած աշխատանքին մասին: Ժողովականները մեծապէս տպաւորուած էին տարուած աշխատանքէն, յատկապէս ՀՕՄ-ի շարքերէն ներս այժմէական գաղափարներով երիտասարդներ ներգրաւելու ջանքերէն, Արցախի, Զաւախքի, Սուրիոյ եւ Լիբանանի համար կատարուած դրամահաւաքներու անմիջական եւ գոհացուցիչ արդիւնքներէն: ՀՕՄ-ի բոլոր մասնաճիւղերը, իրենց առաւելագոյն ճիգը թափած էին հասնելու մեր մօտակայ եւ հեռավոր հայրենակիցներու կարիքներուն:

Հասած էր պահը ամբողջացնելու ժողովին մնայուն դիւանը: Առաջարկուեցաւ պահել առժամեայ դիւանը եւ միաձայնութեամբ երկրորդ ատենապետ ընտրուեցաւ ընկ. Վարդուհի Պարտազեան (Թորոնթօ) եւ երկրորդ ատենադպիր՝ Վարդի Դանիէլեան (Մոնթրէալ):

Ընկ. Աննա Պուլկարեան նշանակուեցաւ ժողովավարական կանոններու մեկնաբան: Կատարուեցան Ընտրողական, Յարաբերական թուղթեր քննող, Բանաձեւի, Հաշուեքննիչ յանձնախումբերու անդամներու ընտրութիւն: Շրջանային վարչութեան հիւրերն էին Լաւալի քաղաքապետարանի անդամ ընկ. Սեդա Թոփուզեան (Լաւալ), Նոյեմի Եագուպեան (Մոնթրէալ) եւ Զարուկ Հասարճեան (Թորոնթօ): Պատգամաւորական ժողովին կողմէ որպէս հիւր հրաւիրուեցան ընկ. Մարո Տրուսեան (Մոնթրէալ), Քրիստին Աֆարեան (Լաւալ), Ալվարդ Քէշիշեան (Թորոնթօ), Ջեփիլու

Տորնա (Թորոնթօ), Գեղուհի Պատաճեան (Թորոնթօ) եւ Սօսի Չանկրեան (Մոնթրէալ): Թղթակից նշանակուեցաւ ընկ. Տիրուկ Մանճիկեան (Մոնթրէալ):

Ժողովականները ունկնդրեցին ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան գեկոյցը, ներկայացուած ընկ. Արմինէ Կարապետեանի կողմէ, որ կ'անդրադառնար Կեդրոնական վարչութեան եւ իր միակորներուն կողմէ տարուած հսկայական աշխատանքին՝ օգնութեան հասնելու Հայաստանի, Արցախի, Լիբանանի, Սուրիոյ եւ Զաւախքի, պատերազմէն, աղէտներէն եւ ընկերային դաժան պայմաններու մէջ ապրող մեր հայրենակիցներուն, ինչպէս նաեւ Մօր ու Մանկան Առողջապահական կեդրոնին եւ ծննդատան, Սօսի Մանկապարտէզներուն, Որբախնամ եւ Ուսանող ծրագրիներուն, Զինուորի տուն վերականգնողական կեդրոնին եւ ուսանողներուն: Ժողովը քննարկեց ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան կանոնադրային փոփոխութիւնները, Համահայկական Պատգամաւորական ժողովի օրակարգը եւ կատարեց համապատասխան թելադրանքներ եւ առաջարկներ:

Պատգամաւորական ժողովը շարունակուեցաւ Շաբաթ, 1 Յուլիսին: Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետուհի ընկ. Լուսին Փալանճեան եւ հաշուապահ ընկ. Անի Հոթոյեան ժողի յաջորդաբար ներկայացուցին միամեայ տեղեկագիրները: Ժողովի մասնակցողները մեծ ուշադրութեամբ հետեւեցան տեղեկագիրներուն: Ժողովականները իրենց լուսաբանական հարցումներուն ստացան սպառիչ եւ գոհացուցիչ բացատրութիւններ:

Յարաբերական եւ Հաշուեքննիչ յանձնախումբերու գեկոյցէն ետք հասեր էր ժամը ըստ էութեան գնահատանքը կատարելու այս հսկայական եւ կամաւոր աշխատանքին: Լսելէ էր տարուած հայանպաստ, բարեսիրական եւ մարդասիրական օգտակար եւ ծաւալուն գործունէութեան մանրամասնութիւնները, ժողովականները եւ հիւրերը յոյժ գնահատեցին Շրջանային վարչութեան միամեայ գործունէութիւնը: Գնահատուեցան յատկապէս որբերու խնամակալութեան աշխատանքը, մասնաճիւղերու հետ համերաշխ կապը, «Կանչ» հաղորդման ստեղծած հետաքրքրութիւնը, երեք տարուան թագաժաճի պատճառաւ ընդհատուած «Լրատու»ի վերահրատարակութիւնը, նախորդ Պատգամաւորական ժողովի բանաձեւերու իրագործումը, Զաւախքի, սուրիահայրութեան եւ սփիւռքեան գաղութներու անմիջական օգնութիւն հասցնելու արագ աշխատանքը, հաշուապահական ճշգրիտ ներկայացումը եւ ոչ-հայ ընկերութիւններուն հետ գործակցութիւնը: Ժողովը նաեւ բարձր գնահատեց այս բոլորին իրագործումը մէկ տարուան ժամանակաշրջանին:

Շաբաթ գիշեր Շրջանային վարչութեան կողմէ կազմակերպուած ճաշկերոյթ-խորախմանքը առիթը տուաւ շրջաններէն եկած ընկերուհիներուն աւելի մօտէն ծանօթանալու իրարու հետ:

Կիրակի, 2 Յուլիսի նիստը սկսաւ բանաձեւի գեկոյցի շարունակութեամբ, սպա նախահաշիւի ներկայացումով: Հասեր էր նաեւ պահը ընտրելու Գանատայի Շրջանի նոր վարչութիւնը: Այսպէս, Շրջանային Վարչութեան անդամներ ընտրուեցան ընկերուհիներ Լուսին Փալանճեան (Մոնթրէալ), Վալերի Յարութիւնեան (Մոնթրէալ), Արփի Սանոսեան (Մոնթրէալ), Քրիստին Աֆարեան (Լաւալ), Աստղիկ Սաչալճեան (Լաւալ), Յասմիկ Բաբխեան (Թորոնթօ), Մարալ Միսիրեան (Թորոնթօ): Փոխ անդամներ ընտրուեցան Ջեփիլու Ասատուրեան (Մոնթրէալ), Անի Գրալեան (Մոնթրէալ), Նելլի Պարսեմեան (Լաւալ), Մարալ Յովսէփեան (Լաւալ), Ջեփիլու Տորնա (Թորոնթօ) եւ Գեղուհի Պատաճեան (Թորոնթօ): Կատարուեցաւ նաեւ Հայաստանի մէջ կայանալիք Համահայկական Պատգամաւորական ժողովին պատգամաւորներու ընտրութիւնը: Միաձայնութեամբ ընտրուեցան ընկ. Աննա Պուլկարեան (Մոնթրէալ), Անի Օհանեան

ՀՕՄ... Ծար. էջ 4

Պէտք է Փրկել Արցախը

Այն օրէն, երբ Նիկոլ Փաշինեան Ազգային ժողովի բեմէն յայտարարեց, որ «Միջազգային ընտանիքը» կը պահանջէ նշաճողը իջեցնել, հիմը դրուեցաւ «խաղաղութեան դարաշրջանի» քաղաքականութեան: Փաշինեան կը վստահեցնէր, որ պահանջներու մակարդակին նուազումին պիտի յաջորդէ միջազգային հասարակութեան «քոնսոլիտացիան» Հայաստանի շուրջ, այսինքն՝ համատարած զօրակցութիւնը ի նպաստ հայութեան: Նշաճողի իջեցումը տեղի ունեցաւ, սակայն Հայաստանի պահանջներու, համեստ պահանջներու բաւարարումը՝ անորոշ միջազգային հասարակութեան կողմէ, տեղի չունեցաւ: Նշուած քաղաքական գիծը բանակցային միջավայր բերաւ արեւմտեան աշխարհը, գլխաւորաբար՝ Եւրոպական Միութիւնը եւ Ամերիկայի Միացեալ Նահանգները: Առ այժմ, միակ նուաճումը Հայաստանի ու Ազրպէյճանի սահմանի երկայնքով, հայաստանեան կողմը, եւրոպացի դէտերու տեղակայումն է: Դէտերը կը դիտեն ու կը գեկուցեն: Այդքան միայն:

Նշաճողի իջեցումը յանգեցաւ Հայաստանի տարածքին 29.800 քառ. քմ սահմանման, միաժամանակ միակողմանիօրէն Ազրպէյճանի տարածքին ճանաչումը՝ 88.600 քառ. քմ: Այսինքն, Հայաստան կ'ընդունի, որ Արցախը, կամ նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը մաս կը կազմէ Ազրպէյճանի հողային ամբողջականութեան: Փոխան այս յանձնուողական քայլին, Փաշինեան կ'ակնկալէ, որ Արցախի ժողովուրդին անվտանգութեան եւ իրաւունքներուն շուրջ բանակցութիւններ տեղի կ'ունենան Պաքուի եւ Ստեփանակերտի միջեւ, անորոշ ու առայժմ անգոյ միջազգային հովանաւորութեամբ:

Այս բոլորին դիմաց, Ազրպէյճան կը շարունակէ իր գաւթողական քաղաքականութիւնը: Կը խստացնէ Արցախի պաշարումը, Բերձորի միջանցքը փակ կը պահէ, իւրաքանչիւր բանակցային հանգրուանի զինուորական գործողութիւն մը կը կատարէ ու կը հրաւիրէ Արցախի 120.000 ժողովուրդը, որ, ըստ ընդունուած որոշման, ազրպէյճանական հողի վրայ կ'ապրի, «ինքնակրօնելու» (համարկուելու) ազրպէյճանական հասարակութեան՝ Ազրպէյճանի միւս քաղաքացիներու իրաւունքներով եւ պարտաւորութիւններով: Կը հետեւի, որ պէտք է մոռնայ Արցախի Հանրապետութիւնը, անկախութիւնը եւ ինքնորոշման իրաւունքը: Արցախցիները կասկած չունին, որ Արցախեան հարցին նման «լուծում» պիտի յանգեցնէ Արցախի հայաթափման ու վերջնական կորուստին:

Բազում բանակցութիւններ տեղի կ'ունենան, գլխաւորաբար՝ արեւմտեան մասնակցութեամբ, Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ: Վերջինը՝ Ուաշինկթընի մէջ, Հայաստանի եւ Ազրպէյճանի արտաքին գործոց

նախարարներու՝ Արարատ Միրզոյեանի եւ Ճէյհուն Պալաւանի, եւ Եւրոպայի բանակցութիւններն են, մասնակցութեամբ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Էնթոնի Պրինքընի: Ըստ այս վերջինին, խաղաղութեան համաձայնագիր խմբագրելու գործին մէջ փոխըմբռնման յառաջընթաց արձանագրուած է (նոր գիծումնե՞ր), թէ եւ քանի մը առանցքային հարցերու շուրջ դիրքորոշումները կը պահանջեն հետագայ աշխատանք: Կառուցողական համարուած բանակցութիւնները, ըստ Միացեալ Նահանգներու, տակաւին չեն հասած իրենց վերջնագիծին:

Ուաշինկթընի մէջ տեղի ունեցաւ եւրոպայ «կառուցողական» բանակցութիւններ մեկնաբանելու համար Հանրային հեռուստացոյցը հարցազրոյցի հրաւիրած է Միացեալ Նահանգներու դեսպանը՝ Քրիսթինա Քուլինը: Ան գոհ է Հայաստանի իշխանութիւններու գործելակերպէն եւ Հայաստանը կը համարէ տարածաշրջանին մէջ ժողովրդավարութեան կղզեակ մը: Ամերիկացիները սովորութիւն ունին նոյնիսկ ամբողջատիրական վարչաձեւերն ալ գովաբանելու, պայմանով որ անոնց կողմնորոշումը ի նպաստ իրենց ըլլայ: Այլ բա-

նորու կարգին, Քուլին յայտնած է, որ իր երկիրը կը հաւատայ եւ կը յուսայ, թէ արցախահայութիւնը խաղաղօրէն կ'ապրի երբ Ղարաբաղը Ազրպէյճանի մաս դառնայ. ատիկա կարելի է, եթէ բոլոր կողմերը միասնաբար ջանք թափեն զայն կարելի դարձնելու համար: Եւ աւելցուցած, թէ ատիկա է ճիշդ մօտեցումը: Հասկնալի եղա՞ւ, թէ ո՞վ է նշաճողը իջեցնելու հեղինակը:

Յիշեցնենք, որ Արցախի Ազրպէյճանի կազմին մէջ ներառումը բացառելու համար, Ազգային ժողովի ընդգիծմանը խմբակցութիւնները բազմաթիւ փորձեր կատարեցին: Տեղի ունեցան խորհրդարանական լսումներ. «Արցախը չի կրնար Ազրպէյճանի կազմին մէջ ըլլալ» թեմայով քննարկումներ, նման նիւթով բանաձեւի մը որդեգրման համար խորհրդարանի օրակարգ մտցնելու առաջարկ, զոր մերժեց մեծամասնութիւնը, ընդգիծութեան կողմէ հրաւիրուած նմանատիպ նիստ մը չկայացաւ մեծամասնութեան բացակայութեան պատճառով:

Ինչպէ՞ս կարելի է օրինական միջոցներով արգելել իշխանութիւններուն Արցախը թողնել Ազրպէյճանի կազմին մէջ: Խորհրդարանին կողմէ նման որոշման մը կայացման դէմ դրուած կրկնուած արգելքներէն ետք, խումբ մը մտաւորականներ դիմած են ժողովրդային մերժումի միջոցին: Հայաստանի Հանրապետութեան օրէնսդրութիւնը կարելիութիւն կ'ընձեռէ ժողովրդային նախաձեռնութեամբ օրակարգ մտցնելու Ազգային ժողովին: 50.000 քաղաքացիներ, իրենց ստորագրութեամբ իրաւունք ունին Ազգային ժողովի օրակարգին վրայ արձանագրելու նիւթ մը: «Հայաքուէ» կողմէ ալ նախաձեռնութիւնը երկու նիւթ կ'առաջարկէ Ազգային ժողովին. Արցախը երրորդ այլ պետութեան մը մաս չի կրնար կազմել եւ՝ Յեղասպանութեան միջազգային ճանաչման եւ հատուցման պահանջը: Այս երկու հարցերու ժխտումը կը քրէականացուի եւ կրնայ պատճառ դառնալ 10-էն 15 տարի ազատազրկման: Ստորագրահաւաքը, որ սկսած է յունիս 29-ին (փոխան 26-ի) տեղի կ'ունենայ, ըստ օրինի, մարզպետարաններու, քաղաքապետարաններու եւ համայնքապետարաններու մէջ: Ստորագրահաւաքը պիտի տեւէ 60 օր: Առաջին շաբթուան արդիւնքները, խոստմունքից են. 15.000 քաղաքացիներ արդէն ստորագրած են «Հայաքուէ»-ին:

Յուսանք, որ այս նախաձեռնութիւնը վերջապէս կը յաջողի սահման մը դնել իշխանութիւններու շարունակական գիծումներուն եւ փրկել Արցախը:

ՏԻԳՐԱՆ ԺԻՆՊԱԾԵԱՆ

ՀՕՄ... Սկիզբը էջ 3

(Լաւալ), Արտա Շահինեան (Թորոնթօ) եւ Յասմիկ Բաբիսեան (Թորոնթօ): Իսկ փոխ անդամներ ընտրուեցան ընկճ. Զեփիւս Ասատուրեան (Մոնթրէալ) եւ Վարդուկ Պարտազեան (Թորոնթօ):

Չնախատեսուած հարցերու ընթացքին առիթը տրուեցաւ պատգամաւորներուն արտայայտուելու եւ փոխանցելու իրենց տպաւորութիւնները, այսպէս՝ թիւադրուեցաւ Շրջանային վարչութեան Պատգամաւորական ժողովէն ետք, առաջին անգամ ըլլալով մասնակցող պատգամաւորները հրաւիրել առցանց ժողովի մը, իմանալու համար անոնց տպաւորութիւնները:

Երեք օրուան վրայ երկարող օրակարգերու քննարկումները հասած էին իրենց աւարտին: ՀՕՄ-ուհիները ինչպէս միշտ այս անգամ եւս փորձեցին իրենց լաւագոյնը տալ ժողովին մասնակցութեամբ, ընել իրենց ազգօգուտ պարտականութիւնը, քաջ գիտնալով որ որպէս զինուորագրեալ եւ ուխտեալ հայուհիներ պէտք է շարունակեն այս սուրբ գործը եւ մանաւանդ յաջորդ սերունդին փոխանցել նուիրումի եւ կարօտեալին ու տկարին հասնելու ոգին եւ կամքը:

ՀՕՄ-ի Գանատայի շրջանը յաջողութեամբ եւ պատուով կատարած էր իր պարտականութիւնը եւ ահա դարձեալ ոտքի կը կանգնէր, որպէս «լոյսի բանակ», շարունակելու եւ դիմակայելու նոր մարտահրաւէրներ, բարելաւելու եւ տէր կանգնելու հայ դպրոցին, հայ գինուորին, հայրենիքին, ծնողագուրկ մանուկին, պատանիին եւ հայ ուսանողին:

Ուժ, կորով եւ բարի երթ ՀՕՄ-ի բոլոր ընկերուհիներուն:

Տիրուկ Մանգիկեան
Մոնթրէալ

Voyages HAIG Travel

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...
ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻԷՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

*Նոր Յացէ՛լ
Voyages Haig Travel
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

PERMIS DE QUÉBEC

Tel: + 1 514-284-7676
Email info@haigtravel.ca

ADVERTISE YOUR BUSINESS HERE

ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԵԶ «ՀՈՐԻՉՈՆ»Ի ԶԵՐ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵՑԵՔ՝ ԺԱԳ ՎԱՐՊԵՏԵԱՆԻՆ

CALL JACK VARBEDIAN (416) 722-9225

Russia calls for ensuring rights and security of Artsakh Armenians

MOSCOW—Russian authorities have expressed their readiness to collaborate with international efforts to ensure the rights and security of the Armenians of Artsakh, in their latest disagreement with the government of Azerbaijan.

“The Russian Federation has always treated the territorial integrity of the Republic of Azerbaijan with respect,” Russian Deputy Foreign Minister Andrey Rudenko insisted during a July 17 meeting with Azerbaijan’s ambassador to Russia, according to the Russian Foreign Ministry. “At the same time, this does not cancel the task of comprehensively promoting the process of Armenian-Azerbaijani normalization, resolving all issues on the agenda, including ensuring the rights and security of the population of Nagorno-Karabagh, exclusively by peaceful political and diplomatic methods.”

Rudenko’s statement is the latest in a back-and-forth between the Russian Foreign Ministry and its Azerbaijani counterpart regarding the unblocking of the Berdzor (Lachin) Corridor. On July 15, the Ministry of Foreign Affairs of Russia released an unambiguous statement urging Azerbaijan to open the Berdzor Corridor and restore Artsakh’s gas and electricity supply.

“It is a matter of concern that today the situation around Nagorno-Karabagh is developing according to a negative scenario. The humanitarian crisis in the area is deepening,” the statement reads. “This may entail the most dramatic consequences for the Karabagh Armenians, or ordinary residents of the region.”

Azerbaijan has placed Artsakh under blockade since December 2022, leading to critical shortages of food and medical supplies. Azerbaijan has also periodically disrupted Artsakh’s access to natural gas and electricity, which are supplied by Armenia through lines that cut across Azerbaijani-controlled territory. Since June 15, Azerbaijan has also blocked the International Committee of the Red Cross and Russian peacekeepers from traveling along the Berdzor Corridor to deliver humanitarian supplies and transfer medical patients to Armenia for treatment.

Government-sponsored Azerbaijani protesters posing as eco-activists had closed the Berdzor Corridor from December 12, 2022 to April 23, 2023. They ended their protest after Azerbaijan set up a military checkpoint at the entrance to the corridor from Armenia, placing movement along the corridor completely under the control of Azerbaijani.

Azerbaijan’s Foreign Ministry criticized the statement from its Russian counterpart. It defended the border checkpoint as a measure to “prevent illegal activities and to ensure trans-

parency.” The Foreign Ministry accused Russia of failing to prevent “illegal activities,” including the transportation of military equipment and landmines from Armenia to Artsakh. It also claimed that the Artsakh Defense Army is “supported under the supervision of the Russian peacekeeping contingent.”

Russian Deputy Foreign Minister Rudenko called the statement from Azerbaijan’s Foreign Minister “incorrect.”

Azerbaijani leaders have repeatedly accused Armenia of transferring weapons to Artsakh, in order to justify the blockade of the Berdzor Corridor. They have not provided evidence for this claim. On February 22, the International Court of Justice rejected a request from Azerbaijan for provisional measures ordering Armenia to stop using the Berdzor Corridor for this purpose, citing insufficient evidence.

The July 15 statement from Russia’s Foreign Minister also asserts Russia’s readiness to collaborate with international efforts to settle the Artsakh conflict.

“The Russian side confirms its intention to actively contribute to the efforts of the international community to restore the normal life of Nagorno-Karabagh,” the statement reads.

While Russia has been preoccupied by its war in Ukraine, Western actors, namely the United States and the EU, have emerged as key mediators in the Artsakh conflict and Armenia-Azerbaijan normalization process. Russia has accused the West of attempting to seize Russia’s traditional position as the primary mediator in the South Caucasus. However, in the July 15 statement, Russian authorities signaled closer alignment with the West in the negotiation process.

On the same day that the Russian Foreign Minister released its statement, Armenian Prime Minister Nikol Pashinyan, Azerbaijan’s President Ilham Aliyev and European Council President Charles Michel held their sixth trilateral meeting in Brussels. Michel did not report progress toward a peace treaty after the meeting.

“We are going through one of the most comprehensive and vigorous stages of negotiations between Armenia and Azerbaijan,” Michel said. “And even though our meeting took place in the context of a worrying increase in tensions on the ground, I noted important momentum in the political discussions and efforts.”

Michel “emphasized the need to open the Lachin road” during the meeting, according to a readout from the EU. He also “noted Azerbaijan’s willingness to provide humanitarian supplies via Aghdam.”

(The Armenian Weekly)

Artsakh Parliament calls on the UN to take effective measures to enforce peace

The National Assembly of Artsakh calls on the UN to take effective measures to enforce peace in Artsakh. Below is the full text of the statement:

On September 27, 2020, with the direct participation of Turkey and the involvement of foreign armed terrorists, grossly violating the principle of non-use of force and the threat of force, Azerbaijan unleashed a 44-day military aggression, which was stopped with the mediation of the Russian Federation, with the joint statement of the leaders of Armenia, Azerbaijan and Russia on November 9, 2020. In accordance with the procedure established by the tripartite statement, peacekeeping troops of the Russian Federation have been deployed in the Republic of Artsakh (Nagorno-Karabagh) for a period of 5 years, with the possibility of further extension, if one of the Parties does not announce the intention to stop the application of this provision 6 months before the end of the period.

With the tripartite statement, the Russian Federation, in fact, implemented the provisions of peaceful settlement of disputes defined in Chapter 6 of the UN Charter, in particular, Part 1 of Article 33, moving the settlement of the dispute between the parties to the conflict to the field of “mediation, agreement and negotiations”, which failed as a result of the continuous and large-scale aggression displayed by Azerbaijan, creating a regional crisis with the involvement of direct and indirect parties to the conflict. On the other hand, the subjectivity of the Republic of Artsakh and the will of the people of Artsakh continue to be ignored. The people of Artsakh, in accordance with the popular norms and principles of international law, as well as the legislation of the USSR, exercised their right to self-determination in 1991, declaring the Republic of Nagorno Karabagh (Artsakh) on September 2, and holding a referendum on Independence on December 10.

The Russian peacekeeping contingent stationed in Artsakh does not have an international mandate — a circumstance that gives a green light to Azerbaijan’s violations of the Tripartite Declaration and the norms and principles of international law, and the continued threat to the security and stability of the region. The actual proofs of the above are the gross violations of the cease-fire regime and norms of international law established by the Tripartite Statement by Azerbaijan, the records of the decisions of the European Court of Human Rights and the UN International

Court of Justice, and the PACE resolution. In particular, as a result of the blocking of the Berdzor (Lachin) corridor, the siege of Artsakh that has been going on for more than seven months, the disruption of infrastructure, the continuous intimidation of the civilian population, the propaganda of national hatred, the deliberate destruction of Armenian churches, historical, cultural, religious and other monuments and the many recorded cases of vandalism. The politics of ethnic cleansing with the mentioned and other methods are clear manifestations of crimes against humanity.

Based on all that, as well as the determination of the United Nations to save future generations from the scourge of war, ethnic cleansing and genocide, and the responsibility of maintaining international peace and security, the highest representative body of the people of Artsakh, the National Assembly, calls on:

The Republic of Armenia:

to immediately take measures to endow the peacekeeping mission located in the Republic of Artsakh with an international mandate, applying the established procedure to the UN Security Council, the General Assembly, proposing to take appropriate steps in the direction of maintaining peace and security in the region.

To the international community, represented by the permanent members of the UN Security Council:

Adhering to the goals and principles set forth in Chapter 1 of the UN Charter and guided by the procedure set forth in Chapter 7 of the UN Charter, adopt an imperative decision (resolution) by taking and establishing effective measures to enforce peace in Artsakh.

The Republic of Artsakh is committed to save its people from the scourge of war, to re-establish faith in fundamental human rights and freedoms, as well as the equal rights of large and small nations, therefore it expects from these structures to create conditions that will ensure respect for the obligations arising from the norms of international law, promote the provision of a dignified life for the people of Artsakh in conditions of freedom.


World-renowned historian Richard Hovannisian dies

Professor Richard G. Hovannisian passed away in Los Angeles on July 10, at the age of 90, the Armenian Centre for National and International Studies (ACNIS) reported.

He was a world-renowned historian, a national academician of the Republic of Armenia, the founder and first holder of the Chair in Modern Armenian History at UCLA, later named in his honor, and author of the monumental four-volume work *The Republic of Armenia and Multiple Books on the Armenian Genocide and the Historical Homeland of the Armenian People*.

Prof. Richard G. Hovannisian was a monumental figure in the field of Armenian Studies. Considered as the Dean of Modern Armenian History, he established the field of Modern Armenian History in the Western Hemisphere. He supported the establishment of some of the most important chairs in Armenian Studies in the United States.

Hovannisian was the child of Genocide survivors. His father, Kaspar Gavroian, was born in the village of Bazmashen near Kharper in 1901. Unlike others,



he survived the Genocide and arrived in the U.S. He changed his last name from Gavroian to Hovannisian after his father Hovannes. In 1928 Kaspar married Siroon Nalbandian, the child of Genocide survivors. They had four sons: John, Ralph, Richard, and Vernon. Richard was born in Tulare, California, on November 9, 1932. Being the son of Genocide survivors played an important role in his academic path. In 1957, he married Dr. Vartiter Kotcholosian in Fresno and had four children: Raffi, Armen, Ani, and Garo. Raffi would become the first Minister of Foreign Affairs (1991-1992) of the Modern

Republic of Armenia.

Hovannisian began his academic life in 1954 by earning a B.A. in History, followed by an M.A. in History from the University of California, Berkeley. In 1966, he earned his Ph.D. from the University of California, Los Angeles (UCLA). His dissertation was published in 1967 with the title *Armenia on the Road to Independence* which was the precursor to the four-volume magnum opus *The Republic of Armenia*. Hovannisian played an important role in establishing the teaching of Armenian history.

Continued on page E2

A Mari Usque Ad Mare

GOVERNMENT INVESTS \$1-MILLOIN IN ARTS AND CULTURE IN WATERLOO REGION

A new investment of over \$1-million was just announced by Bardish Chagger, MP for Waterloo, Tim Louis, MP for Kitchener—Conestoga, and Alex Mustakas, Artistic Director & CEO of Drayton Entertainment, that will be allocated to converting an industrial warehouse into a brand new accessible arts and cultural space for the youth. This investment will provide rehearsal halls, classrooms, music rooms, and also acting studio spaces. The new Drayton Entertainment Youth Academy will be a place of arts and culture for the youth in Waterloo and create a safe space for them to create and inspire.

“Waterloo is a dynamic and a diverse place. Drayton Entertainment’s Youth Academy is another place for residents to come together and foster a sense of civic culture in the community. By transforming an industrial space into a hub for the arts and culture, we are reinforcing the spirit of creativity and innovation that Waterloo is known for,” said MP Chagger on behalf of Dominic LeBlanc, Minister of Intergovernmental Affairs, Infrastructure and Communities.

“Making spaces inclusive by default is exactly what our government wants to achieve: a shift towards a barrier-free country for all. This initiative represents that shift. Thanks to an investment from the Enabling Accessibility Fund, young people in Waterloo Region will be able to explore their creativity without barriers,” said Carla Qualtrough, Minister of Employment, Workforce Development and Disability Inclusion.

GOVERNMENT OF CANADA UNVEILS THE NEWLEY ENHANCED TWYN RIVERS DAY USE AREA IN RNUP

During a press declaration made by Gary Anandasangaree, MP for Scarborough-Rouge Park and Parliamentary Secretary to the Minister of Justice and Attorney General of Canada, on behalf of Steven Guilbeault, Minister of Environment and Climate Change and Minister responsible for Parks Canada, the reopening of the Twyn Rivers Day Use Area in Rouge National Urban Park was announced. The renewed facility and infrastructure upgrades that also will lead to enhanced visitor experiences is part of a \$2.6-million investment made by the Federal government.

This investment saw improvements to the existing trails as well as a brand new accessible trail section. New pedestrian bridges have also been constructed for added safety while crossing the Little Rouge Creek. Enhancements and expansion to the parking area were made, now accommodating 83 vehicles. The historic Rouge Valley Inn’s below ground foundation that remains, which dates back to the early 1900’s, will be preserved and incorporated into the design of the park.

“Our Government is committed to protecting biodiversity while helping Canadians and visitors to Canada foster meaningful connections to nature. This federal investment revitalizes the popular Twyn Rivers Day Use Area in Rouge National Urban Park, benefitting residents of the Greater Toronto Area as well as visitors to the region and ensuring meaningful experiences for years to come. Parks Canada will help visitors discover and connect with nature, all within the boundaries of Canada’s largest urban centre,” said Gary Anandasangaree, Member of Parliament for Scarborough-Rouge Park and Parliamentary Secretary to the Minister of Justice and Attorney General of Canada.

GOVERNMENT OF CANADA INVESTS IN CYCLING NETWORK IN RICHMOND CITY CENTRE

In a recent press announcement made by Wilson Miao, MP for Richmond Centre, Parm Bains, MP for Steveston-Richmond East, and Malcom Brodie, Mayor of Richmond, a new a joint investment of \$6.8-million was announced to expand the cycling network in Richmond’s City Centre in British Columbia.

The joint federal and provincial investment will be used to construct nearly 4km of new protected bike lanes, multi-use pathways, and provide the much needed improvements to the crosswalks and lighting in the area. These enhancements will provide a safer experience for pedestrians and cyclists.

MP Miao, on behalf of Dominic LeBlanc, Minister of Intergovernmental Affairs, Infrastructure and Communities said: “As we strive to create greener, better connected communities, our government is prioritizing investing in active transportation. The funding announced today will support the expansion of Richmond’s cycling network, ensuring more people can access the city centre safely via active travel. We will continue to work with partners to action their infrastructure priorities and work towards our collective emissions-reductions goals.”

“Building a core, protected cycling network in Richmond’s City Centre is a priority for the community. Enhancing active transportation infrastructure allows residents to access essential goods and services both safely and efficiently, encouraging less reliance on vehicular transit. Our government remains committed to investing in projects that make life easier for Canadians and support a greener future for our country,” said MP Bains.

ISHKHAN GHAZARIAN

HOVANNISIAN...

continued from page E1

ory at UCLA. In 1987, he became the first holder of the Armenian Education Foundation Chair in Modern Armenian History at UCLA, which after his retirement was named in his honour as the Richard Hovannisian Endowed Chair in Modern Armenian History, with Prof. Sebouh Aslanian as its first incumbent.

Hovannisian was a Guggenheim Fellow and received numerous prestigious national and international awards for his service to the field and civic activities. He served on the Board of Directors of multiple national and international educational institutions and was a member of the Armenian National Academy of Sciences. After finishing his four-volume *The Republic of Armenia*, he dedicated his research and career to battling the denial of Armenian Genocide, resurrecting the history of Armenian towns and villages of the Ottoman Empire, and writing textbooks on modern Armenian history. Although not a scholar of Armenian Genocide, he has contributed more to the discipline than many others in the field. He edited multiple volumes on different facets of the Armenian Genocide, including historical, literary, and artistic perspectives. Hovannisian also spearheaded a monumental project to preserve the eyewitness accounts of the Armenian Genocide survivors.

In the 1970s, he launched the Armenian Genocide oral history project. He and his students interviewed more than 1,000 Armenian Genocide survivors in California.

In 2018, Hovannisian donated the collection to the USC Shoah Foundation’s Visual History Archive to be available to scholars around the world. He single-handedly edited and published 15 volumes with Mazda Press as part of the UCLA Armenian History & Culture Series. The 15 volumes covered the history of Armenians in Van/Vaspourakan, Cilicia (with Simon Payaslian), Sivas/Sepastia, Trebizond/Trabzon, Baghesh/Bitlis, Taron/Mush, Smyrna/Izmir, Kesaria/Kayseri and Cappadocia among other places. The final book in the series, *The Armenians of Persia/Iran*, was published in 2022. Hovannisian’s also edited the two-volume *The Armenian People from An-*

cient to Modern Times, which is considered a classic Armenian History textbook.

Hovannisian came from a generation that fought against the stifling of Armenian voices within the fields of Middle Eastern and Ottoman Studies, which had relegated Armenian Studies to second-class status. He fought for the relevance of Armenian Studies within these fields and tirelessly fought against the efforts to marginalize Armenian issues and to deny the Armenian Genocide.

Besides his contribution to the field, Hovannisian also mentored and educated multiple generations of scholars and thousands of students. He was a strict mentor who demanded that his students work to reach their full potential. He wanted to make sure that they would survive and thrive in the tough terrain of the academic job market.

In his lifetime, Hovannisian was especially influenced by two people: his wife Vartiter and Simon Vratsian (the last Prime Minister of the First Republic of Armenia). Vartiter was his life’s partner for more than half a century. Her dedication to Richard and the field of Armenian Studies played an important role in shaping who Richard became. Vartiter was an intellectual companion who read and reviewed every piece that he wrote. She was also a constant presence at every conference he planned or attended. In the early 1950s, Vratsian, the author of a major book on the First Republic, became Hovan-

nisian’s mentor when he studied Armenian language at the Hamazkayin Nishan Palanjan Jemaran in Beirut, Lebanon. This influence led Hovannisian to write the first academic work on the First Republic of Armenia and created the first step for his academic career.

In 1974, Hovannisian along with Dickran Kouymjian, Nina Garsoïan, Avedis Sanjian, and Robert Thomson spearheaded the project to establish a Society for Armenian Studies (SAS).

Considered as the pillars of Armenian Studies, the main objective of this group was the development of Armenian Studies as an academic discipline. With access to very limited resources, this group of scholars was able to establish the foundations of a Society that would play a dominant role in developing Armenian Studies in North America and beyond. From a handful of chairs and programs that supported the initiative at the time, today Armenian Studies as a discipline has flourished in the United States with more than thirteen chairs and programs providing their unconditional support to the Society. Hovannisian was the president of SAS for three terms (1977, 1991-1992, 2006-2009). During his tenure the Society flourished and was able to achieve major accomplishments in the field.

In 2019, the Society for Armenian Studies awarded Hovannisian with the SAS Life Time Achievement Award in recognition and appreciation for his outstanding service and contribution to the field of Armenian Studies.

Ascenseur  Elevator
Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4

RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

**RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
INSTALLATION OF ELEVATORS.**

Eddie, Pedro, Joyce Oughourlian

Crown Pastries
 حلويات، لتاج

Fine Middle Eastern Pastries

SCARBOROUGH

1279 Kennedy Rd, Ontario
 (416) 615-7000

MISSISSAUGA

5083 Dixie Rd, Unit D3, Ontario
 (905) 602-2018

SCARBOROUGH

2086 Lawrence Ave E., Ontario
 (647) 351-2015

OAKVILLE

407 Iroquois Shore Rd, Ontario
 (905) 339-2021

Crownpastries.com



**REACHING
 7 MILLION
 CANADIAN READERS
 WEEKLY**




Diversity is our Strength!



**NATIONAL ETHNIC PRESS &
 MEDIA COUNCIL OF CANADA**

**Conceil national de la presse et
 des medias ethniques du Canada**


CANADA'S OTHER VOICES



Նախապէս

**zoo
 GRANBY**

Այս ամառ առիթ տուէք
 ձեր երեխաներուն
 առաւել էւս ընտելանան
 կենդանիներուն



Յետոյ

1300 կենդանի
 Ջրաշխարհ
 Ժամանցի այգի

Բաց է
 ամէն օր

Գնեցէք ձեր
 տոմսերը իսկոյն





CASSANDRA I.D.A. PHARMACY

ARMENIAN MEDICAL CENTRE & PHARMACY

PHARMACISTS
SARKIS BALIAN, BScPhm, RPh
MARAL BALIAN, PharmD, RPh
VARTAN BALIAN, PharmD, RPh

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝
 ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝
 ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ
 ՎԱՐԴԱՆ ՊԱԼԵԱՆ

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղչ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:
Walk-in Clinic onsite: (416) 331-9111

հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)
 Toronto, Ontario M1R 1V2 Tel : (416) 449-2040 Fax: (416) 449-2048





SHK2023

35 ANS DE KERMESSE

Ուրբաթ

Vendredi 18 août

Ouverture des portes à 18h

Admission générale: 40\$

Admission 3-17: 20\$



Forfait 3 jours 80\$
date limite 4 août

WWW.SHKERMESSE.COM

eventbrite

HAROUT PAMBOUKJIAN

Շաբաթ

Samedi 19 août

Ouverture des portes à 17h

Admission générale: 40\$

Admission 3-17: 20\$



HYETRIX



MARTIN MKRTCHYAN



TW@-FOUR

**TOUT LE
WEEKEND**



Կիրակի

Dimanche 20 août

Ouverture des portes à 13h

Admission générale: 20\$

Admission 3-17: 10\$



JOËLLE



ELIE BERBERIAN

@SHKermesse
www.SHKermesse.com

École arménienne Sourp Hagop
3400 rue Nadon, Montréal

Accès illimités aux jeux d'arcades et ballons gonflables avec admission



FROM RUNWAY TO ROADWAY



AWD
ALL-WHEEL DRIVE

**LEXUS
RX**



AWD Premium shown

2023 RX 350 AWD

LEASE APR FROM **6.4%*** 24 MONTHS

BI-WEEKLY LEASE PAYMENT FROM **\$358**^{\$} DOWNPAYMENT \$9,611^{\$}

VEHICLE PRICE **\$61,468***

LEXUS
**LEXUS GABRIEL
ST-LAURENT**

3303, ch. de la Côte-de-Liesse
Saint-Laurent, QC H4N 3C2
lexusgabrielstlaurent.com
514 747-7777

*Representative lease example based on a 2023 Lexus NX 250 AWD sfx 'X' on a 24 month term at an annual rate of 4.9% and Complete Lexus Price of \$50,268. Bi-weekly payment is \$358 with \$5123 down payment or equivalent trade-in, \$0 security deposit and first monthly payment due at lease inception. Total of 52 bi-weekly lease payments required during the lease term. 32,000 kilometre allowance; charge of \$0.20/km for excess kilometres. Taxes, license, registration and insurance are extra. Limited time offers only apply to retail customers at participating Quebec Lexus Dealers. Dealer order/trade may be required (but may not be available in certain circumstances). Complete Lexus Price includes Freight/PDI (\$2,205), Tires Tax (\$15), Filters (\$2.5), Dealer Fee (\$495), and A/C charge (\$100). Offers are subject to change or cancellation without notice. Offers are effective beginning March 1, 2023, and expire on March 31, 2023, unless extended or revised. See Lexus Gabriel for complete details.

CLIMATISATION TECHNO AC
Air Conditioning/Heating/Ventilation
Service, Repair, Sales, Installation
Residential, Commercial
General Construction (Doors, Windows, Insulation...)
RBQ: 5784-1082-01
514-838-3230
climatisationtechnoac@gmail.com
Vahram Noubarian / Sako Hasarkuzian

Albert Arkilianian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker
aarkilianian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596
